



ԵՂԻՎԱՐԴ

Ս Ե Վ Ա Ն

Սեա՛նն ահա,
 Երկինքին դեմ՝ արցունքով լի
 Աչքն երբեմնի,
 Իդձն ասմազուն, երազն հալած,
 Ժողովուրդին բազմահալած,
 Կրակներեն՝ որոնք դարեր
 Բյուրեղներու վերածեցին
 Սիրտերը մեր,
 Ու դաշտերեն հոսեցուցին,
 Ջուրի փոխան, կարմիր հեղեղ:

Սեա՛նն ահա,
 Արցունքն անհուն
 Հերոսներուն ու սուրբերուն,
 Հողին որոնց—ճերմակ թռուն,—
 Թառած հպարտ կատարներուն
 Մեր լեռներուն,
 Կմբմնջե դեռ անդադրում՝
 Ալիքներուն հետ ծովակին
 Նրդ դարձած վերքն հին օրերուն:

Սեա՛նն ահա,
 Կզղին աղվոր,
 Կապած իբրև գոտի կախարդ՝
 Լույս ու կապույտ,
 Հսկաներու շարքեն շուրջի,
 Զատված, ինկած ծոցը ջուրին:
 Լիճեն ժայթքած հողի լանջքին,
 Երազ մ՛իհնչափս խոր ու ահեղ՝
 Զույգ մատուռներ,
 Մենակյացներ կարծես երկու,
 Արձանացած՝
 Տեսիլքի մեջ վերասլաց,
 Կամ ունկնդիր՝ հորիզոնին մեր լեռներուն,
 Լսելու ձայնն Անոր, որուն
 Օր մը բացինք մեր հույսն ու սերն՝
 Ու մեր հողին:

Ափիդ կեցած, լիճ հայրենի,
 Լուռ կբացվիմ
 Տրոփներուն սիրտիդ զմբուխս,
 Ու կթվի թե կշարժին
 Ալիք ալիք, շրթներդ անհուն,
 Ավարտելու
 Տխուր հեքիաթն հին օրերուն:
 Ու կնայիմ աչքով անկուշտ՝
 Քարերուն սուրբ,
 Երկինքին դեմ իբրև աղթք.
 Ու կարթննան հողիս մեջ
 Հազար տրոփ ու խոկ ու հույզ,
 Որոնք այլևս մեր օրերուն
 Դարձեր են մութ հիշատակներ
 Անցելասույզ:

Արևն անուշը հայրենական,
 Մեղր ու հեշտանք կթափե վար:
 Լիճն է խաղաղ,
 Երազեն նոր զարթնած կույսի
 Աչքերու պես:
 Իր լույծ ծոցին կողողղալ
 Նավակ մ՛աղվոր,
 Նման անոր՝
 Որ ցայտեր էր մեր հողին
 Որպես երազ,
 Եվ գոր մեկնած կկարծեինք
 Անվերադարձ:

Սեա՛նն ահա,
 Կյանքի, լույսի նոր շատրվան,
 Արագածի կատարներուն՝
 Դարեր վառող
 Լուսավորչի լույսին փոխան:

Սեա՛նն ահա,
 Ուժի, փառքի համերգ անհուն,
 Արծաթ ծնծղա.
 Եվ Հրազդանն՝
 Իրմե վազող երզն ազամանդ,

Մեր դաշտերուն ու սիրտերուն
Վերև ալիք ալիք բացվող
Խնդության շող:

Սեանն ահա,
Զերթ հայելի կախարդական,
Որուն ափին, աշխարհն Հայոց,
Բուժած վերքերն իր դարավոր,
Կդիտես դեմքն իր թարմացող,
Ամեն օր նոր,
Բլուրեղին մեջ ալիքներուն,

Թարթիչներու՝
Գեղին փոշին օտարության,
Ու ստքերու՝ հալած կապար,
Բայց աչքերու՝ հրազ մը վառ,
Կդիտեմ քեզ ազահարար:

Լի՛ճ հայրենի,
Լարին վրա իմ օրերու
Չեմ դիտեր ես
Քանի՛ ցավոտ տարիներ դեռ,



Ս Լ Ա Ը

Նկար՝ Աղավնի Մեսրոպյանի

Նման կարծես
Պատանիին ավանդության,
Պատկերն օրուն — ճերմակ շուշան,—
Վետերն ի վար վազող ջուրին,
Միշտ կաղվորնար,
Կերազանար:

Սեան, Սեան,
Ափսե ակատ՝
Արյունին դեմ վերջալուսին,
Լեռները մինչ կղձգունին
Կոհակ, կոհակ,
Շղարշներու ներքև լեռակ,
Ափիդ կեցած,
Համակ խոովք, համակ արյուն,

Քեզմե հեռու
Պիտի շարեն շուքերն իրենց...
Նախազգացո՛ւմ, ախ, շարանենդ,
Եթե գոցվին աչերս կարոտ
Վերջալուսի մ'ալսպես շքեղ,
Օտար աստղի մը լուսին տակ,
Պատկերդ անույշ
— Կտոր մ'երկինք՝ լեռան գերկին,—
Պիտի մնա հոգիս մեջ,
Մարգրիտն ինչպես սատափաշող՝
Շիթ մը իբրև արեգնային,
Մոայլ ծոցին մեջ ոստրեին:

(«Անի» ամսագիր, Քեյրուք,
1952 թ., № 4—5)

